

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 5/2

1 փետրվարի 2013թ.

«ԿԱ ՊԵԿ» հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, ուսումնասիրելով «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ 28.12.2012թ-ի թիվ 02-692 դիմում-բողոքը (մուտք «ԿԱ ՊԵԿ 09.01.2013թ. թիվ 47-13) և վերջինիս առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ դիմում-բողոքի հիման վրա «ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

«ԿԱ ՊԵԿ» նախագահի 28.11.2012թ-ի թիվ 1009923/1 հանձնարարագրի համաձայն «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող «Ը օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում: Արդյունքում 24.12.2012թ-ին կազմվել է թիվ 1009923/1 ակտը, որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 597.008.804 դրամ:

«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ կողմից վերագրյալ ակտի դեմ «ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացվել է 28.12.2012թ-ի թիվ 02-692 դիմում-բողոքը: Որից հետո «ԿԱ ՊԵԿ» հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի նախագահին հասցեագրված 24.01.2013թ-ի թիվ Ե-01/04/2 գրությամբ ընկերությունը բերել է միջնորդություն, որով խնդրել է, որպեսզի 28.12.2012թ-ի թիվ 02-692 դիմում-բողոքը թողնվի առանց քննության:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Ը օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն. «Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից»:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Ը օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, գտնում է, որ «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ 28.12.2012թ-ի թիվ 02-692 դիմում-բողոքի հիման վրա «ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» «Ը օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ 28.12.2012թ-ի թիվ 02-692 դիմում-բողոքի հիման վրա «ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:



Հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ